ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 322-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԿԱՄՈ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՆԻԿՈԼԱՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0021ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ (մտից Ն-18)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Կամո Արամայիսի Նիկոլայանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով պատկանող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,0021 հա մակերեսով, 10-003-0010-0043 կադաստրային ծածկագրով շինությունը հասցեավորել՝ Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճուղի, 6/15 ավտոտնակ և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 2171509):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 323-Ա

ԿՈԼՅԱ ԼԵՆԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգի N 1 հավելվածի դրույթներով, հաշվի առնելով Վայք համայնքի բնակիչ Կոլյա Լենիկի Ներսիսյանի դիմումը (մտից N Ն-19, 28.10.2024 թ.) և այն հանգամանքը, որ նշված անշարժ գույքը արդեն իսկ օգտագործվում է որպես հասարակական սպասարկման օբյեկտ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել Վայք համայնքի բնակիչ Կոլյա Լենիկի Ներսիսյանին փոխելու սեփական հասարակական նշանակության անշարժ գույքի՝ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 26/1 հասցեում գտնվող շինության (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 13082024-10-0008, գաղտնաբառ՝ VE5LAZQB5BB9) տեսակը հեղուկ վառելիքի լիցքավորման կայանից դարձնելով որպես հասարակական սպասարկման օբյեկտ, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վայք համայնքի բնակիչ Կոլյա Լենիկի Ներսիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 324-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԻՐԱԲ ԳԻԳՈԼԻ ԲԱՅԱԹՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2008թ.-ի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, 2008թ.-ի նոյեմբերի 13-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ Կառավարության թիվ 1328-Ն որոշմամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել քաղաքացի Վիրաբ Գիգոլի Բայաթյանի /ծնված՝ 1954թ./ սեփականություն համարվող, Վայք համայնքի Ջառիփափ բնակավայրի 8-րդ փողոց, 11 բնակելի տուն հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024B2FEQE):
2. Բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թ.:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 0.21350 հա հողամասը (ծածկագիր՝10-022-0099-0006) չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 325-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՆՁՈՐՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,8 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Խնձորուտ բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,8 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-026-0114-0003 կադաստրային ծածկագրով հողամասը հասցեավորել՝ Վայք համայնք, գ. Խնձորուտ, 1 հողամաս (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024ZZP22D):

2.Դիմել ՀՀ կադաստրի պետական կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:

3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 326-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 276-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշման հիմք հանդիսացող օրենքը կիրառելի չէ չկառուցապատված հողամասերի նկատմամբ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդունման պահից չեղյալ համարել Վայք համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի «Քաղաքացի Նորիկ Ավետիսի Սիմոնյանի սեփականությունը համարվող, Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 276-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 327-Լ

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 310-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 30-ի N 11-Ն հրամանը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի՝ «Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու և Վայք համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 310-Լ որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 328-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.09.2024Թ-Ի ԹԻՎ 269-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 06.09.2024 թվականի թիվ 269-Ա «Վայք համայնքի սեփականութուն հանդիսացող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,00272 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1Որոշման վերնագրում գրված «0,00272» թիվը փոխարինել «0,00256»թվով.
1.2 Որոշման բովանդակության 1-ին կետում գրված «0,00272» թիվը փոխարինել «0,00256»թվով, «71,90» թիվը փոխարինել «69,80»թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 329-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի վարձակալության տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված ներքոհիշյալ հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով հայտարարել մրցույթ, մրցույթի օր նշանակել սույն թվականի դեկտեմբերի 9-ը:

1.1 Զառիթափ բնակավայրի տարածքում գտնվող 10-022-0238-0059 կադաստրային ծածկագրով, 5.9 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.

1.2 Զառիթափ բնակավայրի տարածքում գտնվող 10-022-0231-0012 կադաստրային ծածկագրով, 0.11877 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողը.

1.3 Զառիթափ բնակավայրի տարածքում գտնվող 10-022-0293-0008 կադաստրային ծածկագրով, 0.18 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.

1.4 Մարտիրոս բնակավայրի տարածքում գտնվող 10-033-0146-0010 կադաստրային ծածկագրով, 0.80238 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքը.

1.5 Գոմք բնակավայրի տարածքում գտնվող 10-019-0317-0053 կադաստրային ծածկագրով, 1.93407 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.

1.6 Արտավան բնակավայրի տարածքում գտնվող 10-011-0116-0064 կադաստրային ծածկագրով, 0.58849 հա մակերեսով (արոտավայր), 10-011-0116-0066 կադաստրային ծածկագրով,19.82555 հա մակերեսով (արոտավայր, վարելահող), 10-011-0116-0063

կադաստրային ծածկագրով, 1.03848 հա մակերեսով (վարելահող, արոտավայր), 10-011-0102-0026 կադաստրային ծածկագրով, 2.57739 հա մակերեսով (վարելահող), 10-011-0116-0065 կադաստրային ծածկագրով, 1.09065 հա մակերեսով (արոտավայր, վարելահող) հողամասերը.
1.7 Արտավան բնակավայրի տարածքում գտնվող 10-011-1132-0051 կադաստրային ծածկագրով, 0.17857 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.
1.8 Արտավան բնակավայրի տարածքում գտնվող 10-011-0132-0053 կադաստրային ծածկագրով, 0.0842 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.
1.9 Կարմրաշեն բնակավայրի տարածքում գտնվող 10-027-0126-0016 կադաստրային ծածկագրով, 1.2822 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.
1.10 Կարմրաշեն բնակավայրի տարածքում գտնվող 10-027-0101-0103 կադաստրային ծածկագրով, 1.3406 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.
1.11 Կարմրաշեն բնակավայրի տարածքում գտնվող 10-027-0101-0102 կադաստրային ծածկագրով, 0.51559 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.
1.12 Զեդեա բնակավայրի տարածքում գտնվող 10-023-0322-0045 կադաստրային ծածկագրով, 2.91564 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.
1.13 Զեդեա բնակավայրի տարածքում գտնվող 10-023-0309-0032 կադաստրային ծածկագրով, 1.04836 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողը.

2. Հաստատել վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Համայնքի ղեկավարի 05.11.2024 թ-ի
Թիվ 329-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վայքի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփ. հանդիսացող ներքոհիշյալ հողամասերի վարձակալության մրցույթ՝

ԼՈՏ 1. Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպ. նշանակության արոտավայրը /ծածկ՝10-022-0238-0059/, 5.9 հա , տարեկան վարձավճար՝ 100 000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 2. Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, վարելահողը /ծածկ՝10-022-0231-0012/, 0.11877 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 2 700 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 3 Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-022-0293-0008/, 0.18 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 1 500 ՀՀ դրամ (10 տարով):

ԼՈՏ 4 Մարտիրոս բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, այլ հողատեսքը /ծածկ՝10-033-0146-0010, 0.80238 հա տարեկան վարձավճար սահմանելով՝ 10 000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 5 Գոմք բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-019-0317-0053, 1.93407 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 18 000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 6 Արտավան բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, 0.58849 հա մակերեսով (արոտավայր, ծածկ.՝ 10-011-0116-0064), 19.82555 հա մակերեսով (արոտավայր, վարելահող, ծածկ.՝ 10-011-0116-0066), 1.03848 հա մակերեսով (վարելահող, արոտավայր, ծածկ.՝ 10-011-0116-0063), 2.57739 հա մակերեսով (վարելահող, ծածկ.՝ 10-011-0102-0026), 1.09065 հա մակերեսով (արոտավայր, վարելահող, ծածկ.՝ 10-011-0116-0065) հողամասերը, տարեկան վարձավճար սահմանելով հմպ՝ 4 300, 136 500, 7 100, 6 650, 6 800 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 7 Արտավան բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-011-1132-0051, 0.17857 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 5 000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 8 Արտավան բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-011-0132-0053, 0.0842 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 2 000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 9 Կարմրաշեն բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-027-0126-0016, 1.2822 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 22 500 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 10 Կարմրաշեն բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-027-0101-0103, 1.3406 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 25 100 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 11 Կարմրաշեն բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-027-0101-0102, 0.51559 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 10 000 ՀՀ դրամ (25 տարով):

ԼՈՏ 12 Զեղեա բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝ 10-023-0322-0045, 2.91564 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 10 000 ՀՀ դրամ և (25 տարով):

ԼՈՏ 13 Զեղեա բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, վարելահողը /ծածկ՝ 10-023-0309-0032, 1.04836 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 10 000 ՀՀ դրամ և (25 տարով):

Մրցույթը տեղի կունենա 2024թ. դեկտեմբերի 9-ին ժամը 11:00-ին Վայքի համայնքապետարանի շենքում: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, 15 000 դրամի չափով վճարման անդորրագիր, անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթեր: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի կայացման օրվանից 3 օր առաջ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վայքի համայնքապետարան /հեռ. 098 992894/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 330-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԻՐԱԲ ԲԱՅԱԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,40627 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիրաբ Բայաթյանի դիմումը և «Ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանց պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցուցակում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության , ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքը և չի առաջացնում սերվիտուտ, և հիմք ընդունելով Վիրաբ Բայաթյանի դիմումը՝ հողամասից կամովին հրաժարվելու մասին (մտից՝ Բ-38, 06.11.2024թ),

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ճանաչել Վայք համայնքի բնակիչ Վիրաբ Գիգոլի Բայաթյանի /ծնված՝ 28.02.1954թ/ սեփականության իրավունքը ըստ քարտեզագրման արդյունքների 0.0935 հա ընդհանուր մակերեսով ավել օգտագործվող, Զառիթափ բնակավայրում գտնվող, 10-022-0099-0006 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ:
2.Վայք համայնքի Ղառիթափ բնակավայրի 8-րդ փողոց, 11 հասցեում գտնվող քաղաքացի Վիրաբ Գիգոլի Բայաթյանին օրինական հատկացված 10-022-0099-0006 կադաստրային ծածկագրով 0,21350 հա հողատարածքին կից ավել օգտագործվող 0,40627 հա հողատարածքը հետ վերցնել և ճանաչել համայնքային սեփականություն:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 331-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴՈՒՀԻ ՅԱԽՇԻԲԵԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0040ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ (մտից Գ-60, 07.11.2024թ)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Վարդուհի Յախշիբեկի Գրիգորյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով պատկանող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,0040 հա մակերեսով, 10-003-027-001-005 կադաստրային ծածկագրով հողամասը հասցեավորել՝ Վայք համայնք, ք. Վայք, Ազատության փողոց, 21 հողամաս և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 1206723):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 332-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,11 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Սարավան բնակավայրի 1-ին մայրուղի 6 հասցեում գտնվող, 10-039-0001-0013 կադաստրային ծածկագրով, 0,11 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ նշված փոփոխությունն իրականացնելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 333-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.10.2024Թ-Ի ԹԻՎ 302-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 03.10.2024 թվականի թիվ 302-Ա «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Մարտիրոս բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0180 հա մակերեսով արոտավայրը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1Որոշման վերնագրում գրված «0,0180» թիվը փոխարինել «0,0120»թվով.
1.2 Որոշման բովանդակության 1-ին կետում գրված «0,0180» թիվը փոխարինել «0,0120»թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 334-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 - Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Հերհեր բնակավայրի Բազմաղբյուր թաղամասի 1/1 բնակելի տուն հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը 212.99 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,1 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղաքացի Աշոտ Հրաչիկի Եսայանին ՝ շինության համար վճարելով 514 800 /1000 x 514,8/ (հինգ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, հողատարածքի համար՝ 558 460 /212.99x2622/(հինգ հարյուր հիսունութ հազար չորս հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

2.Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**